




ՍՐԲՈՑ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 20-ին՝ երեքշաբթի.—Տօն Սրբոց Ղևոնդեանց քահանայից: Սրբոց Ղևոնդյանց տոնը հայ եկեղեցում մեկն է այն ազգային-եկեղեցական նվիրական տոներից, որոնք խորապես լցնում են հայկառայելների հոգիները թե՛ կրոնական և թե՛ հայրենասիրական ոգևորիչ զգացումներով և, զուտ հայեցի, ազգային բնույթով: Ս. Ղևոնդյանց տոնը մասնավորաբար վերաբերվում է հայ քահանային, որովհետև այս այն տոնն է, որը տարին գեթ մեկ անգամ առիթ է տալիս նրան ամփոփելու ինքն իր մեջ, խորհրդածելու, գտնելու համեմատության եզրեր իր և այն քահանաների միջև, որոնք 1500 տարիներ առաջ մեկ ձեռքում խաչ և մյուսում սուր «Վասն Յիսուսի, վասն հայրենեաց» նահատակության լուսն պսակն ընդունեցին, և պատճառ է հանդիսանում վերանորոգվելու, լցվելու Ղևոնդյանց սուրբ քահանաների եռանդով ու ավյունով, ծառայելու հոտին ու եկեղեցուն ավելի մեծ նվիրումով և հայ քահանային հատուկ զոհողության ոգով:

Մայր Աթոռում այս տարի բացառիկ հանդիսությամբ նշվեց Ս. Ղևոնդյանց տոնը, որին մասնակցեցին Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և հոգևոր ճեմարանի տեսչության հրավերով, շուրջ 40 քահանա հայեր՝ Արարատյան, Ծիրակի, Վրաստանի, Բաքվի, Հյուսիսային Կովկասի թեմերից:


Հանձնախումբը, գլխավորությամբ գեր. տ. Հուսիկ եպս. Սանթրույանի և հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ.

Պողոսյանի, նախապես հոգ էր տարել կազմելով տոնակատարության առթիվ ծրագիրը:

Սրբոց Ղևոնդյանց օրը, ժամը 15-ին, հրավիրված բոլոր քահանաները արդեն ժամանել էին Մայր Աթոռ: Քահանայից դասի այս ի մի հավաքվելը հայ եկեղեցու սրտում՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնում, բոլոր ներկաներին համակել էր ուրախությամբ ու ոգևորությամբ:

Նախատոնակ.—Ժամը 17-ին Մայր տաճարում կատարվեց երեկոյան ժամերգություն և ապա Ղևոնդյանց նախատոնակ՝ հանդիսադրությամբ Վեհափառ Հայրապետի: Հոգևոր ճեմարանի ուսանողները, մասնակցությամբ հյուրաբար ժամանած քահանա հայրերի, խանդավառությամբ երգեցին ս. Ղևոնդյանց նվիրված շարականները (օրհ.՝ Որ յառաջագոյն, հարց.՝ Որ անդադար): Նախքան նախատոնակն սկսվելը, քահանա հայրերին ողջված բարի գալըստյան խոսք արտասանեց գեր. տ. Հուսիկ եպս. Սանթրույանը: Գեր. սրբազանը ողջունելուց հետո քահանա հայրերի ժամանումը Մայր Աթոռ, իր և բոլոր ներկաների անունից շնորհակալություն և երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին, Նրա բարեհաճ կարգադրության համար քահանաների հրավիրման կապակցությամբ:

Հանդիպում Վեհափառ Հայրապետի հետ.—Նույն երեկոյան, ժամը 18.30-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել արժանապատիվ քահանա հայրերին, Վեհաբանում: Նորին Ս. Օծությունը իր ող-



ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐ՝ ՄԱՅՐ ԱԹՈՒՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ՔԱԶԱՆԱ ՀԱՅՐԵՐԻ ՀԵՏ
(1908 թ. մարտի 21)

ջույնի ու օրհնության խոսքը ուղղեց քահանա հայրերին և գովեց մտահղացումը այս հավաքության, բարեմաղթելով, որ հանդիսությունները լինեն օգտակար և արդյունավետ: Վեհափառ Հայրապետը նշելով, որ ամենուրեք, թե՛ սփյուռքում և թե՛ մայր հայրենիքում, հայ ժողովուրդը սերտորեն կապված է իր եկեղեցուն, շեշտեց քահանաների դերը այդ գործում և հորդորեց այսուհետև կրթկանապատկված եռանդով ու ճիգով կատարել իրենց պաշտոնը և արժանի լինել ս. Ղեվոնդյանց հետևորդները կոչվելու: Որպես պատասխան Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքի, քահանայական դասի զգացմունքների թարգմանը հանդիսացավ Ծիրակի թեմից արժ. տ. Արամ քահ. Բոյաջյանը՝ կարդալով երախտագիտության խոսք: Նա շնորհակալություն հայտնելով Նորին Ս. Օծությանը այս հավաքության համար, շեշտեց նաև նման հավաքությունների օգտակարությունը:

Հանդիսավոր ս. պատարագ և քարոզ.— Հացորդ օրը երեքշաբթի, առավոտյան ժամը 8-ին, Մայր տաճարում կատարվեց ժամերգություն և մատուցվեց ս. պատարագ: Պատարագիչն էր Ծիրակի թեմից արժ. տ. Արամ քահ. Բոյաջյանը: Գեղեցիկ և ոգեփորիչ քարոզ խոսեց Վրաստանի թեմից արժ. տ. Հովհաննես քահ. Դանիելյանը՝ «Սահմանք քաջաց գիւշին իրեանց» բնաբանով:

Ժամը 12-ին նախաճաշելուց հետո ձմարանի սեղանատանը, քահանա հայրերը հավաքվեցին Վեհարանի բակում, որ Վեհափառ Հայրապետը բարեհաճեց նկարվել նրանց հետ:

Դասախոսություններ հոգևոր ձմարանում.— Ժամը 12.30-ին հոգևոր ձմարանի հանդիսատեսում, ի ներկայության հրավիրված բոլոր քահանա հայրերի, Մայր Աթոռի միաբանության և հոգևոր ձմարանի դասախոսական կազմի, կարդացվեցին երկու դասախոսություններ: Նախագահում էր գեր. տ. Հուսիկ եպս. Սանթրոքյանը, ներկա էր նաև հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ գեր. տ. Տիրայր եպս. Մարտիրոսյանը: Բացումը կատարեց հոգևոր ձմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես Ժ. վրդ. Պողոսյանը, ողջունելով քահանա հայրերի ներկայությունը հոգևոր ձմարանի հարկի տակ:

Առաջին քանախոսությունը կարդաց հոգեվոր ձմարանի դասախոս արժ. տ. Հովհաննես քահ. Մարտիրոսյանը՝ «Քահանան որպես դաստիարակ» նյութի շուրջ:

Երկրորդ քանախոսությունը կարդաց արժ. տ. Ռուբեն քհն. Սարտիրոսյանը Արարատյան թեմից՝ «Քահանան քարոզիչ» թեմայով, որը տպվել է ամսագրի սույն համարի 50-րդ էջում:

Երեկոյան ժամը 17-ին Մայր տաճարում բոլոր քահանա հայրերը մասնակցեցին երեկոյան ժամերգությանը:

Ժամը 18.30-ին շարունակվեցին գեկուցումները հոգևոր ձմարանում: Կարդացվեցին դարձյալ երկու դասախոսություններ: Առաջինը կարդաց Ծիրակի թեմից արժ. տ. Վազգեն քհն. Դարագոյանը՝ նյութ ունենալով «Քահանայի կոչումը»:

Երկրորդ քանախոսն եղավ հոգևոր ձմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես Ժ. վրդ. Պողոսյանը: Հայր սուրբը հանգամանորեն և պատմական փաստերով խոսեց էկումենիկ շարժման մասին: Բանախոսության մեջ տ. Ներսես Ժ. վարդապետը անդրադարձավ այն տխուր պատճառների վրա, որոնք բաժան-բաժան արեցին Քրիստոսի մեկ և ընդհանրական եկեղեցին: Վերջում նա ասաց, որ հայ եկեղեցին այսօր էլ մասնակցում է այդ շարժմանը՝ համաձայն Ծնորհալու սկզբունքին, հավատալով, որ այն կիրակաճանա միայն Քրիստոսի Ավետարանի ճշմարտորեն կիրառմամբ, փոխըմբռնմամբ և եղբայրական սիրով: Ապա հոգ. տ. Ներսես Ժ. վարդապետը շնորհակալություն հայտնեց ներկաների անունից կարդացված դասախոսությունների համար:

Բանախոսության միջոցին դահլիճ մտավ Վեհափառ Հայրապետը՝ պատմադրվել ներկաներին նոր ոգևորություն:

Վեհափառ Հայրապետը փակման խոսքը արտասանելով, բարեմաղթեց այս նոր ձեռնարկին հարատևության ոգի, որպեսզի նման քահանայից հավաքություններ տեղի ունենան առնվազն տարին մեկ անգամ՝ Մայր Աթոռում: Նորին Սրբությունը շերմ խոսքերով վեր հանեց քահանայական առաքելության քարոյական գեղեցկությունը և կոչ արեց ներկաներին մնալ հավատարիմ իրենց ուխտին և հավատով ծառայել Աստծուն և հայ հավատացյալ ժողովրդին:

Հանդեսը փակվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Հացորդ օրը, փետրվարի 21-ին, չորեքշաբթի, քահանա հայրերը վերադարձան իրենց թեմերը ս. Էջմիածնից՝ վերանորոգված ու նոր կորով ու եռանդ ստացած:

ԳՐԻԳՈՐ ՍՐԿ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ